ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 84

<08> 12 2011թ.

ք. Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ /ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ/ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԸ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 14 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված << Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման>> կարգի 69-րդ կետի 2) ենթակետով, 71-րդ կետի 2) ենթակետով և 73-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հաստատել Արարատի ներմարզային՝ <<Վեդի-Արարատ>> ավտոբուսային թիվ 02-015 երթուղում տրանսպորտային միջոցի փոփոխություն կատարելու մասին ՀՀ Արարատի ներմարզային ավտոբուսային /միկրոավտոբուսային/ երթուղիները ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններին հատկացնելու մրցութային հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 14 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հավելված
ՀՀ Արարատի մարզպետի
2011թ. դեկտեմբերի 8-ի
թիվ 84 որոշման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 14

2011թ. դեկտեմբերի 7-ին կայացած մրցութային հանձնաժողովի նիստի

Նիստի նախագահ Ա. Մուրադյան

Նիստի քարտուղար Ա. Հակոբյան

Նիստին մասնակցում էին մրցութային հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա.Պողոսյանը, անդամներ Վ. Գրիգորյանը, Ս. Ղարիբյանը

Օրակարգ

<<Վեդի-Արարատ>> թիվ 02-015 ավտոբուսային երթուղում տրանսպորտային միջոցի փոխարինման մասին:

Լսեցին- << Վեդի-Արարատ >> թիվ 02-015 ավտոբուսային երթուղում տրանսպորտային միջոցի փոխարինման մասին:

Զեկուցող- հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մուրադյան

Արտահայտվեցին-Ա. Հակոբյանը, Ա. Պողոսյանը, Վ. Գրիգորյանը

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված կարգի 69-րդ կետի 2) ենթակետով, 71-րդ կետի 2) ենթակետով և 73-րդ կետով, հիմք ընդունելով երթուղին սպասարկող <<ՎԵԴՈՒ ԲՈՒԱՏ>> ՍՊ ընկերության 2011 թվականի նոյեմբերի 22-ի N ՄՍ/41 գրությունը՝

Որոշեցին

<<Վեդի-Արարատ>> թիվ 02-015 ավտոբուսային երթուղին սպասարկող ՊԱԶ-320540 մակնիշի 2300Լ /072ԼԼ26/ պետհամարանիշի ավտոբուսը փոխարինել ՊԱԶ-320540 մակնիշի 890ՍԼ26 պետհամարանիշի ավտոբուսով:

Նախագահ	Ա Մուրադյան	/ստորագրություն/
Տեղակալ	Ա.Պողոսյան	/ստորագրություն/
Քարտուղար	Ա.Հակոբյան	/ստորագրություն/
Անդամներ	Վ.Գրիգորյան	/ստորագրություն/
	Ս.Ղարիբյան	/ստորագրություն/

Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Վարդանյան